

ամպերը՝ քամու, արագ իջնողները՝ անձրևի: Եթէ ամպերը դանադան ուղղութեամբ են գնում, հաւանական է, որ անձրև կգայ կամ քամին կփոխուի: Երբ փերսածել ամպերը նեղ և երկար շերտի նման են ձգուում, դա նշան է թէ շուտով մրրիկ կամ անձրևախառն քամի կլինի: Երբսածել ամպերը նշան են, որ մօտ օրերում երկարատե անձրևներ կգան. շերտային—կոյսանման ամպերը ենթադրել են տալիս յանկարծակի անձրև կարկուտի հետ միասին, տեղատարափ կամ արագ անցնող անձրև:

- 1) Եթէ եղեամբ մառախուղ է դառնում, անձրև կգայ:
- 2) Եթէ քամին ճանապարհները վրայ փոշի է պտտեցնում, փոթորիկ կամ անձրև կլինի:
- 3) Առաւօտեան որոտումը քամի է դուշակում, կէսօրին՝ անձրև, երեկոյեան մրրիկ. կայծակը ձմեռ ժամանակ նշան է քամու կամ մրրիկի:



Փարիզից ստացել եմ հետեւեալը՝ «Արարատ»-ի էջերում  
սպագրելու համար.

Ուրախութեամբ կիմանանք, որ ամենայն Հայոց կաթուղիկոսը Ս. Էջմիածնայ վանքը զարդանկարել տալու նպատակով, մասնաւոր նամակով մ' իր մօտ հրաւիրած է Բարիզաբնակ հայ տաղանդաւոր զարդանկարիչ պարոն Պէղիրճեան:

Որքան որ ալ ամեն հայ արուեստասէր հայրենակիցներու ծանօթ է պ. Պէղիրճեան, այնու հանդերձ շահեկան կը համարենք այս առթիւ մեր կողմանէ մէկ երկու խօսք ընել անոր նկարագրի, գործունէութեան և ընդգրկած մասնաճիւղին ընդարձակութեան մասին:

Պ. Պէղիրճեան արուեստագէտ մը ըլլալէ առաջ ճըշմարիտ հայու օրինակելի տիպար մ' եղած է և անճնուէր անդամ մարդկութեան: Իր դուստրն ու մանչ զաւակը իր հօգւովը կրթելէ ու դաստիարակելէ զատ, որոնք այսօր հրապարակի վրայ կը ճանչցուն իբրև արուեստագէտներ և պատուաւոր դիրք ունին օտարազգի շրջաններու մէջ, չէ մոռցած իր կարողութեան չափովը նիւթապէս և բարոյապէս մասնակցել մարդասիրական բողմաթիւ

ձեռնարկներու, քաջալերել ու խրախուսել ուսանողները։  
Ծերունի արուեստագէտը նուազ ծանօթ չէ նաև  
Եւրոպայի գեղարուեստից աշխարհին. եւրոպական բազ-  
մաթիւ գեղարուեստական հանդիսներու մէջ երևցած են  
անոր աշխատութեան նմոյշներ, որոնք փրէտէրիք Լէյթն-ի  
և Իէռօմի նման համբաւաւոր նկարիչներէ և ասոնց նման  
շատերէ գնահատուած և մասնաւոր նամակով շնորհաւո-  
րած են։

Անխոնջ աշխատասէր մը եղած է միշտ պ. Պէղիրճեան,  
իր ամէն բնակավայրի մէջ ձգած է գեղարուեստի նշա-  
նաւոր հետքեր։ Կ. Պոլսոյ արքունական պալատներու մէջ  
անոր զարդանկարչական ճաշակի նրբութիւնը գրեթէ միշտ  
ընկերացած է նշանաւոր ճարտարապետներու հանճարին,  
1900-ի Աշխարհահանդիսի «Բալիյօն Օթօմանի» կարևորա-  
գոյն մասը կրկին անոր մտքի արտադրութիւնն եղած է,  
ցուցադրուած Եւրոպայի առաջ։ Պ. Պէղիրճեանի գործերն  
Հայրիկը Կ. Պոլիս եղած ժամանակն արդէն մօտիկէն ճան-  
չըցած և գնահատած է ու վերջերս անգամ Հայրապետա-  
կան կոնդակով մը պսակած անոր արժանիքը։

Ինչքան ալ որ պ. Պէղիրճեան Տէքօռաթէօռ մը միայն  
ճանչցուած է մեր մէջ, բայց անոր մտքերն ու ուղղութիւնը  
լոկ շէնքերու զարդարման մէջ չեն եղած բնաւ. անդուսպ  
ձգտումն ունեցած է արուեստը արհեստին հետ հաշտե-  
ցունել. զարդանկարչութեան մէջ ամփոփել ասեղնագոր-  
ծութեան կահագործութեան ևն. ձևերու (մօտէլ) ճոխու-  
թիւնն՝ արեւելեան և արևմտեան ճաշակաւոր համադրու-  
թեամբ։

Իղձն ունեցած է տեսնել մեր մէջ բազմարուեստեան  
հաստատութիւն մը, ուր կարողանար գործադրել իր ծրա-  
գիրն և օգտակար հանդիսանալ իւրայիններուն։ Իւր այս  
մտադրութեանց գոհացումն տալու համար հետամուտ է  
այժմ իր յատուկ սարմնն ունենալ Բարիզի մէջ, ուր պիտի  
ցուցադրէ անշուշտ գլխաւորաբար արեւելեան զարդա-  
նկարչական ճաշակը։